

**2014 թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից իրականացված աշխատանքները**

**Մասսայական սպորտ**

1. Հունիսի 1-15-ը ՀՀ մարզերի քաղաքային համայնքներում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 7 շրջաններում և Երևան քաղաքի վարչական շրջաններում անցկացվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի 1-ին փուլը, որին մասնակցել են 2067 մարզական ընտանիքներ: Մրցույթի եզրափակիչ փուլը տեղի է ունեցել հուլիսի 21-27-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում, որին ներկա է եղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Եզրափակիչ փուլին մասնակցել են 144 ընտանիքներ՝ թվով 432 մարդ և 16 հաշմանդամություն ունեցող ընտանիքներ՝ թվով 48 մարդ: Միջոցառման մասնակից ընտանիքները ըստ տարիքային չորս խմբերի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող ընտանիքները պարզևատրվեցին ՀՀ նախագահի պատվոգրերով և դրամական մրցանակներով: Դրամական մրցանակներով պարզևատրվեցին նաև առանձին մարզաձևերում մրցանակային 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր զբաղեցրած ընտանիքները, իսկ թիմային հաշվարկով ընդհանուր միավորներ հավաքած մարզերը պարզևատրվեցին գավաթներով:

2. *Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր*

Խաղերի ծրագրում ընդգրկված են 6 մարզաձևեր: Մասնակցում են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտները:

1-ին փուլ՝ ներդպրոցական մասսայական մրցումներ, 2014 թվականի սեպտեմբեր ամսին՝ ՀՀ 38 տարածաշրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում,

2-րդ փուլ՝ տարածաշրջանային և Երևան քաղաքի վարչական շրջանների մրցումներ, հոկտեմբերի 1-14-ը,

3-րդ փուլ՝ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի առաջնություններ, հոկտեմբերի 18-26-ը,

4-րդ եզրափակիչ փուլ՝ անցկացվել է 2014 թվականի նոյեմբերի 2-5-ը, Երևան քաղաքում, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում:

Եզրափակիչ փուլի մրցումներին 1-ին տեղը գրավեց Տավուշի մարզի Արծվաբերդ, 2-րդ տեղը՝ Վայոց ձորի մարզի Արենի և 3-րդ տեղը՝ Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղական համայնքների միջնակարգ դպրոցները: Մրցանակակիր դպրոցները պարզևատրվել են գավաթներով, հավաստագրերով և մրցանակներով: Շնորհակալագրերով պարզևատրվել են նաև լավագույն դպրոցները, զինղեկները և ֆիզկուլտուրայի ուսուցիչները:

3. ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում

Ծրագրում ընդգրկված են 7 մրցաձևեր՝ կշռաքարի բարձրացում, շախմատ, նարդի, ազգային կոխ-ըմբշամարտ, բազկամարտ, մինի ֆուտբոլ և 1000 մ մասսայական վազքարշավ:

Սեպտեմբերի 10-26-ը ՀՀ մարզերում և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում անցկացված «Մարզական փառատոն» միջոցառմանը մասնակցել են 22000 մարդ: Մասնակիցները պարզևատրվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հավաստագրերով և մրցանակներով: Լավագույն համայնքները՝ Լոռու մարզի Վանաձոր, Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Տավուշի մարզի Իջևան քաղաքները պարզևատրվել են համապատասխան կարգի հավաստագրերով և գավաթներով:

4. *ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն քաղաքային մարզական համայնք», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն մարզական բակ» ստուգատես*

«Լավագույն քաղաքային մարզական համայնք»՝ 1-ին տեղի մրցանակ՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, 2-րդ տեղի մրցանակ՝ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 3-րդ տեղի մրցանակ՝ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին

«Լավագույն գյուղական մարզական համայնք»՝ 1-ին տեղի մրցանակ՝ Տավուշի մարզ, գ. Կողբ, 2-րդ տեղի մրցանակ՝ Շիրակի մարզ, գ. Ամասիա, 3-րդ տեղի մրցանակ՝ Վայոց ձորի մարզ, գ. Արենի, «Լավագույն մարզական բակ»՝ 1-ին տեղի մրցանակ՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի 1-րդ զանգվածի Նանսենի փողոցի 7-րդ շենքի և թիվ 106 դպրոցի հարակից մարզական բակ 2-րդ տեղի մրցանակ՝ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Նալբանդյան 2-րդ շենքի հարակից բակ 3-րդ տեղի մրցանակ՝ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ավան-Առինջ, 1-ին միկրոշրջան, 2/11-րդ շենքի հարակից մարզական բակ

## **5. Հաշմանդամային սպորտ**

- «2014 թվականին Մոչիում կայանալիք ձմեռային պարաօլիմպիկ խաղերին նախապատրաստման և մասնակցության ապահովում» ծրագրի շրջանակում ապահովվել է ՀՀ մարզական պատվիրակության մասնակցությունը Ռուսաստանի Դաշնության Մոչի քաղաքում անցկացվող ձմեռային պարաօլիմպիկ խաղերին (1 մարզիկ, 1 մարզիչ, 1 բժիշկ, 1 պատվիրակության ղեկավար):

- «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ մայիս ամսին անցկացրել է խուլերի ՀՀ շախմատի առաջնություն:

- հունիսի 23-25-ը անց է կացվել խուլերի ՀՀ ազատ ոճի ըմբշամարտի առաջնությունը, իսկ հունիսի 28-30 հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի ՀՀ առաջնությունը (42-ական մասնակից):

- սեպտեմբերի 25-28-ը անցկացրել է խուլերի ՀՀ ֆուտզալի առաջնությունը (6 թիմ, 67 մասնակից՝ Երևան, Վանաձոր, Մարտունի, Գյումրի, Աբովյան քաղաքներից):

- «Հայկական հատուկ օլիմպիադաներ» ՀԿ-ն մայիսի 13-15-ը Վանաձոր քաղաքում անցկացրել է «Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ» ծրագրով ֆուտբոլի հանրապետական առաջնություն (40 մասնակից՝ Երևան, Վանաձոր, Ալավերդի քաղաքներից):

- ՀՀ մարզական պատվիրակությունը համալրված «հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպության մարզիկներով (2 մարզիկ, 2 մարզիչ 1 պատվիրակության ղեկավար) մասնակցել է սեպտեմբերի 9-21-ը Բելգիայի Անտվերպեն քաղաքում կայացած Հատուկ օլիմպիադաների Եվրոպայի ամառային խաղերին: Սուրեն Առուստամյանն աթլետիկա մարզաձևում նվաճել է 2 բրոնզե մեդալ՝ 100մ վազք և հեռացատկ:

- «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» ՀԿ-ն հունիսի 11-13-ը անցկացրել է հաշմանդամների 12-րդ հանրապետական մարզական փառատոնը (113 մասնակից Երևան, Էջմիածին, Աբովյան, Արարատ, Արմավիր, Սպիտակ, Վանաձոր, Գյումրի, Տաշիր, Կապան քաղաքներից), որի շրջանակներում «Գրացիա. հայկական կարմիր խաչի ընկերության միջազգային վերականգնողական կենտրոնում անցկացվել է հաշմանդամային սպորտի հիմնահարցերին նվիրված սեմինար-խորհրդակցություն, շահագրգիռ նախարարությունների և հաշմանդամային սպորտով զբաղվող ՀԿ-ների, ինչպես նաև ԱՄՆ-ից ժամանած «Մոբիլիթի ինտերնեյշնլ» կազմակերպության ներկայացուցիչների մասնակցությամբ:

- «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների ՀԿ հուլիսի 25-ից միջև օգոստոսի 7-ը անցկացրել է կույր շախմատիստների ՀՀ առաջնությունը (17 մասնակից՝ Երևան, Վանաձոր, Գյումրի, Արտաշատ, Էջմիածին, Արմավիր քաղաքներից):

- 2014 թվականի հունիսի 18-28-ը խուլ շախմատիստների ՀՀ հավաքական թիմը (պատվիրակության կազմը՝ 8 մասնակից) մասնակցել է Խորվաթիայի Օպատիա քաղաքում կայացած խուլերի շախմատի օլիմպիական առաջնությանը:

Ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում՝ Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի սաների մասնակցությամբ նվիրված Հայաստանի Հանրապետության Անկախության օրվան: Իրականացվել է հոկտեմբերի 14-ին, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի հետ, որին մասնակցել են կրթահամալիրի 20 երեխաներ:

**6. «Սպորտլանդիա-2014»** մարզական միջոցառում Հայաստանի մանկատների և գիշերօթիկ դպրոցների սաների մասնակցությամբ: Իրականացվել է մայիսի 14-ին: Միջոցառմանը մասնակցել են Գավառի մանկատան, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության, Կոտայքի «SOS մանկական գյուղեր» հաստատության, երեխաների խնամքի և պաշտպանության Երևանի № 1 և № 2 գիշերօթիկ հաստատությունների սաները:

**7. Մարզական-մասսայական միջոցառում՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում** կանանց և անչափահասների շրջանում նվիրված «Հաղթանակի և խաղաղության տոներին»: Իրականացրել է մայիսի 23-24-ը Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության հետ համատեղ:

**8. «Սպորտլանդիա-2014» մարզական մասսայական միջոցառում** նախադպրոցական տարիքի երեխաների և դպրոցական 5-6-րդ դասարանների աշակերտների միջև: Իրականացվել է Երևանի Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում, ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Կոտայքի, Տավուշի, Լոռու, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Շիրակի մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում: Միջոցառումն անցկացվում է 2 փուլով՝ համայնքային և մարզային: Միջոցառմանը մասնակցել է շուրջ 5964 նախադպրոցական և դպրոցահասակ երեխա:

8. 2014 թվականի հունիսի 13-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում «Ֆիզկուլտուրային առողջարարական համալիր» (ՊԱՊ) ծրագրի ստեղծման նպատակով անցկացվեց առաջին խորհրդակցությունը, որին մասնակցեցին ներկայացուցիչներ «Աշխատանքային ռեզերվներ» ՄՀԿ-ից, ՀՍՕԿ-ից, Երևանի քաղաքապետարանից, Ոստիկանությունից, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտից:

### **Սպորտի բարձրագույն նվաճումներ**

1. 2014 թվականին պետական աջակցության ծրագրում ընդգրկված մարզական ֆեդերացիաները անցկացրել են 90 Հայաստանի Հանրապետության առաջնություններ, 133 ուսումնամարզական հավաքներ, մասնակցել են 156 Եվրոպայի, աշխարհի առաջնությունների և միջազգային մրցաշարերի:
2. 2014 թվականին ՀՀ հավաքական թիմերի մարզիկները տարբեր մարզաձևերից /12 մարզաձև/ աշխարհի և Եվրոպայի առաջնություններում, պատանեկան օլիմպիական խաղերում նվաճել են 32 ոսկե, 37 արծաթե և 49 բրոնզե մեդալ, ընդհանուր հաշվարկով 118 մեդալ:
3. 2014 թվականին Հայաստանի մարզական ամենամեծ նվաճումը եղել է հունահռոմեական ըմբշամարտից՝ աշխարհի չեմպիոններ Արսեն Ջուլֆալակյանի, Արթուր Ալեքսանյանի և սամբո մարզաձևից Մավրիկ Նասիրյանի արդյունքը:
4. 2014 թվականի Մոնչիում կայացած օլիմպիական խաղերին ՀՀ հավաքական թիմը հանդես է եկել դահուկավազքից 3 մարզիկ, լեռնադահուկային սպորտից 1 մարզիկ:  
2014 թ. ամառային պատանեկան 2-րդ օլիմպիական խաղերի ՀՀ հավաքական թիմի մարզիկները նվաճել են 2 ոսկե մեդալ ծանրամարտ, 1 արծաթե մեդալ հունահռոմեական ըմբշամարտ, 1 արծաթե մեդալ հրաձգություն, 2 բրոնզե մեդալ ազատ ըմբշամարտ և 1 բրոնզե մեդալ բռնցքամարտ մարզաձևերում:
5. 2014 թ. Էջմիածինում կայացել է Նետաձգության Եվրոպայի մեծահասակների 21-րդ առաջնությունը, որին ՀՀ տղամարդկանց և կանանց հավաքական թիմերը մասնակցել են 4-ական մարզիկներով:
6. Եվրոպայի առաջնության ժամանակ ձեռք է բերվել մեկ ուղեգիր 2015 թ. Բաքվում կայանալիք Եվրոպական խաղերի մասնակցության համար:
7. 2014 թվականին «Հայրենիքի մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով պարգևատրվել են 2 մարդ, «Մովսես Խորենացու» մեդալով՝ 1 մարդ, Ֆիզիկական կուլտուրայի և վաստակավոր գործիչ՝ 4 մարդ, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզիչ՝ 4 մարդ, նախարարության <<Բացառիկ ծառայությունների համար>> մեդալով պարգևատրվել են 10 մարդ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատվավոր աշխատողի կոչում է շնորհվել 28 մարդու, ՀՀ սպորտի վաստակավոր վարպետ կոչում է շնորհվել 3 մարդու, ՀՀ միջազգային կարգի սպորտի վարպետ կոչում է 21 մարզիկի և ՀՀ սպորտի վարպետ կոչում՝ 78 մարզիկի:
8. 2014 թվականին սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչությունը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացրել «Պարտադիր զինվորական ծառայության գորակույցից տարկետում տալու մասին 27 որոշման» նախագիծ և Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2013-2017թթ. նախատեսված ծրագիրը:

### **Մարզական կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականություն**

1. Մարզական հերթափոխի պատրաստման գործընթացի հիմնական ծանրությունը կրում են հանրապետության տարածքում գործող 171 մանկապատանեկան մարզադպրոցները և օլիմպիական հերթափոխի մարզական 2 քոլեջները: 2014 թվականին մարզական 2 քոլեջներում սովորում են միջին տարեկան 866 ուսանողներ, իսկ վերոնշյալ մարզադպրոցների 3676 խմբերում 1919 մարզիչների ղեկավարությամբ 40 մարզաձևերով պարապում են 40912 պատանի մարզիկներ: Այդ մանկապատանեկան մարզադպրոցները տեղաբաշխված են հանրապետության 56 համայնքներում: Հանրապետությունում գործող մարզադպրոցներից 78-ը համայնքային ենթակայության են, 25-ը՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, 2-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, 27-ը՝ Երևանի քաղաքապետարանի, 7-ը՝ մարզպետարանների, 5-ը՝ ֆուտբոլի ֆեդերացիայի և 27-ը՝ պետական աջակցություն ստացող մարզական հասարակական կազմակերպությունների: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության 25 մանկապատանեկան

մարզադպրոցներում և «Հայաստան», «Մևան» և «Դինամ» մարզական հասարակական կազմակերպությունների համապատասխանաբար 776 և 553 ուսումնամարզական խմբերում՝ այդ մարզադպրոցներում աշխատող 411 և 263 մարզիչ-մանկավարժների ղեկավարությամբ մարզվում են ընդհանուր առմամբ 13573 պարապոդներ, այդ թվում՝ նախարարության համակարգի մարզադպրոցների 7827 և մարզական հասարակական կազմակերպությունների 5454 պարապոդներ:

2. 2014 թվականին նախատեսված էր 15 մանկապատանեկան մարզադպրոցների մարզակառույցների վերանորոգում և կառուցում (6 մարզադպրոցի վերանորոգում, 5 մարզադպրոցի կառուցում և 4 մարզադպրոցի հիմնանորոգում, 1.132.870.000 դրամ ընդհանուր արժողությամբ): Սակայն համաշխարհային ընդհանուր ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով 10 մանկապատանեկան մարզադպրոցների մարզակառույցների վերանորոգման և կառուցման աշխատանքները կասեցվել է, իսկ 5 մարզադպրոցների (Չարենցավանի, Մասիսի, Աշտարակի, Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոցներ, «Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոն) մարզակառույցների վերանորոգման և կառուցման աշխատանքների համար նախատեսված 408.895.000 դրամի փոխարեն իրականացվել է 234.016.717 դրամ արժողությամբ շինարարական աշխատանքներ:

3. 2014թ-ին 6 ցիկլով իրականացվել է մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպում, որի արդյունքում վերապատրաստվել են 149 մարզիչ-մանկավարժներ (ըստ մարզաձևերի՝ գեղարվեստական մարմնամարզություն, ակրոբատիկա, սպորտային մարմնամարզություն 24 մարզիչ-մանկավարժ, սուսերամարտ, հրաձգություն, նետաձգություն 24 մարզիչ-մանկավարժ, աթլետիկա, հեծանվային սպորտ, թիավարություն, առագաստանավային սպորտ 30 մարզիչ-մանկավարժ, ազատ ոճի ըմբշամարտ, հունահռոմեական ըմբշամարտ, սամբո, ձյուդո, ուշու, բոնցքամարտ մարզաձևերից 26 մարզիչ-մանկավարժ, բասկետբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, ֆուտբոլ, շախմատ, շաշկի մարզաձևերից 32 մարզիչ-մանկավարժ և սեղանի թենիս, թենիս և բադմինթոն մարզաձևերից 13 մարզիչ-մանկավարժ):

4. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից առաջարկվել է ՀՀ կառավարության գործունեության ծրագրի կատարումն ապահովող 2015 թվականի միջոցառումների ցանկում ընդգրկել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի և հավելավճարների վճարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Վերոնշյալ ցանկում ընդգրկվելու դեպքում նախագիծը, որը մշակման փուլում է 2015 թվականին կներկայացվի ՀՀ կառավարություն:

## Երիտասարդություն

Երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացման, ինչպես նաև ԼՂՀ պետական երիտասարդական քաղաքականությանը և հասարակական կազմակերպություններին աջակցության նպատակով իրականացվել են՝

- «Ծմակահողի երիտասարդ բնագետների ամառային դպրոց» ծրագիրը, որի հիմնական նպատակն է եղել մասնակիցներին ծանոթացնել ժամանակակից բնագիտական աշխարհայացքային պատկերացումներին, կազմակերպել ուսուցումներ գյուղական երիտասարդների շրջանում: Ծրագրի շրջանակներում Արցախի թվով 80 երիտասարդ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում մասնակցել են ծրագրին և ձեռք բերել համապատասխան հմտություններ:

- ««Բարքամի Արցախ - 2014» երիտասարդական ինտերակտիվ ոչ ֆորմալ հանդիպում» ծրագիրը, որի հիմնական նպատակն է եղել ԼՂՀ երիտասարդության շրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործնական կապեր ստեղծել արտաքին աշխարհի հետ: Ծրագրի շրջանակներում Արցախի թվով 50 երիտասարդ և երեք տասնյակից ավել հյուրեր մասնակցել են ծրագրին:

Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանման նպատակով իրականացվել են՝

- «Երևան-Մոսկվանակերտ մարաթոնյան վազք և երիտասարդների առողջ ապրելակերպի խթանում» ծրագիրը, որի հիմնական նպատակն է եղել ՀՀ և ԼՂՀ երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանումը մարաթոնյան վազքի միջոցով: Ծրագրի շրջանակներում 5 մասնակից անցել են ողջ ճանապարհը և հանդիպել տեղի ավելի քան 150 երիտասարդի հետ:

- “Միասնական աջակցություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականին” ծրագիրը, որի հիմնական նպատակն է եղել ՀՀ մարզերի և ԼՂՀ երիտասարդներին մերձեցնել ֆուտբոլային երկրպագման մշակույթին: Ծրագրին մասնակցել է 120 երիտասարդ երկրպագու:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթը, որի գլխավոր նպատակն է խթանել Հայաստանի Հանրապետության տարածքային համաչափ զարգացումը և ավելի մարզակենտրոն դարձնել երիտասարդական պետական քաղաքականությունը, նպաստել մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառուցվածքների զարգացմանը: Այս նպատակով իրականացվել է «2014 թվականի երիտասարդական մայրաքաղաքի պաշտոնական բացման արարողությունը և Միսիանին է փոխանցվել Հայաստանի 2014 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բանալիները: Ծրագրին մասնակցել են հարյուրից ավել երիտասարդ, ովքեր մասնակցել են նաև երիտասարդական պուրակի ծառատունկին:

Միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացման, այլ երկրների երիտասարդության ոլորտում փորձի փոխանակման նպատակով իրականացվել է՝

- «ԱՂՀ Մասնակից պետությունների երիտասարդության հարցերի խորհրդի նիստ Միսիան քաղաքում» ծրագիրը, որի հիմնական նպատակն է եղել ԱՂՀ մասնակից պետությունների երիտասարդական քաղաքականության ոլորտի հարցերի քննարկումը, փորձի փոխանակումը, համատեղ ծրագրերի մշակումը, համապատասխան փաստաթղթերի ընդունումը: Նիստին մասնակցել են երիտասարդական ոլորտի 28 պաշտոնյաներ ԱՂՀ-ից:

- Վրաստանում իրականացվել է «Երիտասարդ առաջնորդների վերապատրաստում» ծրագիրը, որի հիմնական նպատակն է եղել երիտասարդներին պատրաստել որպես առաջնորդների, որպեսզի հետագայում նրանք իրենց ակտիվ մասնակցությունը բերեն համայնքային կյանքի զարգացման և հայապահպանության գործին: Ծրագրին մասնակցել է 25 հայ երիտասարդ Վրաստանի տարբեր շրջաններից:

- Իրականացվել է «Ճանաչողական և համագործակցության ուխտագնացություն Հայաստան և Արցախ» ծրագիրը, որի հիմնական նպատակն է եղել Արցախի հերոսամարտի պատմական և հոգևոր վայրերին ծանոթացումը, ընկերական կապերի հաստատումը և համատեղ ծրագրերի մշակումը: Ծրագրին մասնակցել է Վրաստանի տարբեր մարզերից 20 հայ երիտասարդ:

Երիտասարդ գիտնականներին աջակցության նպատակով իրականացվել է “Ինովացիոն մոտեցումները գիտության բնագավառում” ծրագիրը, որի հիմնական նպատակն է եղել գիտության տարբեր բնագավառների տարաբնույթ հիմնահարցերի, մտավոր գործունեության արդյունքների առևտրայնացման հիմնախնդիրների քննարկումը: Ծրագրի շրջանակներում գիտաժողովին մասնակցել են 55 երիտասարդ:

2014 թվականին երիտասարդությանը համապատասխան տեղեկատվությամբ ապահովելու նպատակով մշակվել և իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- ««Երիտասարդ» օն-լայն պարբերական» ծրագիրը, որի հիմնական նպատակն է երիտասարդության գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ հավաքել տեղեկատվություն, մշակել և [www.eritasard.am](http://www.eritasard.am) կայքի միջոցով տարածել հասարակության մասնավորապես երիտասարդության շրջանում:

- «Երիտասարդական հեռուստահաղորդաշար» ծրագիրը, որի հիմնական նպատակն է ստեղծել հեռուստահաղորդումների շարք, որոնց միջոցով կբարձրացվի երիտասարդ քաղաքացիների իրազեկվածության աստիճանը երիտասարդության հրատապ թեմաների վերաբերյալ: Այս տարի մրցույթով ծրագիրն իրականացվում է Արմնյուզ հեռուստաընկերության կողմից, որի շրջանակներում շաբաթական մեկ անգամ հեռարձակվում է «Երևանն է խոսում» հեռուստահաղորդաշարը: Ինչպես նաև ամսական մեկ անգամ «Ես» ամսագրում լույս է տեսնում երիտասարդական էջ:

Հասարակական-քաղաքական/քաղաքացիական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցությունը խթանելու նպատակով՝

- «Հանդիպում-քննարկում մարզային երիտասարդության շրջանում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են այցելություններ ՀՀ 5 մարզեր՝ Կոտայքի, Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի: Հանդիպումների ընթացքում մարզպետարանների մասնագետների, մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդների անդամների, ՀԿ ներկայացուցիչների և երիտասարդների մասնակցությամբ կազմակերպվել են խորհրդակցություններ և քննարկումներ:

- «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի ներկայացում, հանրային քննարկումներ» ծրագրի շրջանակներում իրականացվել են այցելություններ մարզեր, տեղի են ունեցել հանդիպումներ մարզպետարանների աշխատակազմերի երիտասարդության հարցերով զբաղվող

մասնագետների, երիտասարդական խորհուրդների ներկայացուցիչների, մարզային երիտասարդության հետ:

Իրականացվել է երիտասարդական մայրաքաղաք Միսիանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի. «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի»» ծրագիրը: Ծրագրի նպատակն է եղել Միսիան քաղաքի երիտասարդների շրջանում բարձրացնել թրաֆիքինգի կանխարգելման իմացության մակարդակը: Ծրագրին մասնակցել են Միսիանի 130 երիտասարդ մասնագետներ:

### **Միջազգային կապեր**

1. ԱՊՀ երիտասարդության հարցերի խորհրդում 2014 թվականին Հայաստանի Հանրապետության համանախագահության շրջանակներում հունիսի 11-14-ը ՀՀ Սյունիքի մարզի Միսիան քաղաքում տեղի է ունեցել ԱՊՀ երիտասարդության հարցերի խորհրդի հերթական նիստը, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության ներկայացուցիչներ:

2. 2014 թվականի հունիսի 18-19-ը Ղրղզստանի Չոլպոն-Աթա քաղաքում տեղի է ունեցել ԱՊՀ մասնակից երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի մասնակիցների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի նիստը, որտեղ քննարկվել են ԱՊՀ մասնակից երկրների մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ռազմավարության իրականացմանն ուղղված 2013 թվականի ծրագրի իրականացման արդյունքները, մինչև 2020 թ. ընկած ժամանակահատվածում ԱՊՀ-ում ազգային մարզաձևերի պահպանման ու զարգացման ծրագրի և դրա իրականացմանն ուղղված 2015-2017 թթ. միջոցառումների ծրագիրը:

3. Մի շարք երկրների սպորտի պատասխանատու մարմինների հետ սպորտի ոլորտում համագործակցության նպատակով մշակվել են միջգերատեսչական համաձայնագրեր.

- «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարարության միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին»,

- «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարարության միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին»,

- «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջև սպորտի բնագավառում համագործակցության մասին»

4. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանը մասնակցել է սպորտի մասին մասնակի ընդլայնված համաձայնագրի (EPAS) հետ համագործակցության շրջանակներում 2014 թվականի սեպտեմբերի 17-19-ը Մազլինգենում (Շվեյցարիայի Համադաշնություն) տեղի է ունեցած Եվրոպայի խորհրդի սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրի և Շվեյցարիայի Համադաշնության կառավարության կողմից կազմակերպվող մարզական մրցումների մեքենայությունների հարցերով Եվրոպայի խորհրդի սպորտի հարցերի նախարարների համաժողովին:

5. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Վրաստանի համանուն նախարարության միջև մշակվել է 2014 թվականի նոյեմբերի 28-ին նախարար Գաբրիել Ղազարյանի Թբիլիսի կատարած այցի ընթացքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Վրաստանի սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջև կնքված սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի դրույթների իրականացման 2015-2016 թթ. գործողությունների ծրագիրը»:

6. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանը 2014 թվականի դեկտեմբերի 10-12-ը Ալմաթիում մասնակցել է Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարարության կողմից կազմակերպված սպորտային բժշկության վերաբերյալ միջազգային սեմինար-խորհրդակցությանը, որտեղ Ղազախստանի Հանրապետության սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հարցերի կոմիտեի նախագահ Իսիյար Կանազատովի հետ ստորագրել է հուշագիր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սպորտային բժշկության զարգացման ուղղությամբ աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով: